Էջ 3

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/2-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ/3
**N 11/218-2020**

ք. Երևան «11» 03 2020թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և «ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ազատյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱԱԾ | «ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ |
| ք.Երևան, Նալբանդյան104 | ք. Երևան, Ձ. Սարկավագի 157 |
| ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն | "Արարատբանկ" ԲԲԸ |
| Հ/h 900011301067 | Հ/h 1510023294810100 |
| ՀՎՀՀ 01507079 | ՀՎՀՀ 00803554 |
| Տնօրենի տեղակալ | Տնօրեն |
| Ա. Հակոբյան | Ա. Ազատյան |

Հավելված N 1
« 11 » 03 2020թ. կնքված
ծածկագրով պայմանագրի
N 11/218-2020

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | մատակարարման | | | | | |
| | | | | | | | | | | | Ժամկետը*** | | | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | 90 օրացույցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 31.03.2020թ. | 180 օրացույցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 30.06.2020թ. | 270 օրացույցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 30.09.2020թ. | 340 օրացույցային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 15.12.2020թ. |
| 4 | 35811160/518 | մարտական հանդերձանք | ″Քանաքեռի կարի ֆաբրիկա″ ՍՊԸ | **Ձմեռային կոստյում կեպիով, կոմուֆյաժ գործվածքից /սահմանապահ զորքերի/:** Ձմեռային կոստյում կեպիով բամբակյա գունաքողարկման թելի C-9961 արտիկուլի <<Ռիպստոպ>> տեսակի կամ համարժեք ամրապնդած ջրայուղանդրադարցնող ծածկույթով գործվածքից, 1մ2 մակերեսային խտությունը՝ 195գր, բաղադրությունը՝ 35% բամբակ, 65% պոլիէսթեր, տաք ներդիրով: Ձմեռային կոստյումը բաղկացած է բաճկոնից, տաբատից և կեպիից: **Բաճկոնը** ուղիղ ձևացքով է, թիկունքը և առաջամասը անջրաթափանց, քամապաշտպան շերտով, առաջամասի և հետևամասի ներդիրը մշակվում է անջրաթափանց արհեստական կտորով, երկկողմանի մզդակարված 300 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով, թևքերը՝ անջրաթափանց արհեստական կտորով միակողմանի մզդակարված 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով: Աստառը | լրակազմ | 23994,00 | 11037240 | 460 | ք. Երևան, Այվազովսկու նրբ. 5 | 460 | 0 | 0 | 460 | 0 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | մշակվում է 70 գրամ մակերեսային խտությամբ արհեստական կտորից, բաղադրությունը՝ 100% պոլիէսթեր: Բաճկոնի թիկունքամասը մշակված է վրակարված կոկետկայով, երկու կարանի: Առաջամասերում մշակված են 2 կողային վրադիր կափույրով փակվող գրպաններ, որոնք կողքից բացվածքով են: Գրպանի լայնությունը 20սմ, երկարությունը 22սմ, կափույրի լայնությունը 6սմ, որոնք կոճկվում են գաղտնի կոճվածքով՝ 2 օղակ կոճակով: Կափույրները և վրադիր գրպանների եզրերը զարդակարված են 0.6սմ կարի լայնությամբ: Կողքի զարդակարերը վրակարված են 0.1 սմ կարի լայնությամբ: Բաճկոնի թևքերը բաղկացած է երեք կտորից, առանց ուսագլխի կարի /ռեկլամ/, կարված են փակ զույգ կարերով: Թևքերի վերին հատվածում մշակվում են կափույրով փակվող թեք վրադիր գրպաններ, լայնությունը 14սմ, երկարությունը 15սմ, կափույրի լայնությունը 6սմ: կափույրները կոճկվում են 2սմ լայնությամբ կպչուն ժապավենով: Թևքերի արմնկամասում մշակվում են լրացուցիչ, կրկնակի զարդակարերով ուղղանկյունաձև /երկու անկյունները շեղ/ արմնկակալներ: Թևքերի ներքևի մասում մշակված են թևքի լայնությունը կարգավորող պատաններ, որոնց կարգավորումն իրականացվում է կպչուն ժապավենով: Ձախ թևքի վրադիր գրպանի կենտրոնում կարվում է <<ՀՀ ԱԱԾ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ>> թևքանշանը: Բաճկոնի կոկետկայից 3սմ ներքև աջ կողմում կարվում է ժապավեն <<ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ>>, իսկ ձախ կողմում կարվում է 13սմx2.5սմ ճնաչափի ինքնակպճուն ժապավեն <<ԱՐՅԱՆ ԿԱՐԳԻ>> համար: Բաճկոնը միալանջ է, գաղտնի կենտրոնական կոճվածքով, կոճկվում է 70 սմ երկարությամբ, խոշոր ատամներով /տրակտոր/ շղթայով: Բաճկոնի շղթան ծածկվում է 7.5 սմ լայնությամբ կափույրով, որը կոճկվում է 5 հատ 2.5x7 սմ ճնաչափի կպչուն ժապավենով /լիպուչկա/: Բաճկոնի և թևքերի ներքևի եզրերը ծալված են և վրակարված: Ծալման լայնությունը պատրաստի վիճակում՝ 2սմ: Բաճկոնի գոտկատեղի ուղղությամբ մշակվում է գաղտնի գոտկանման պարան իրանի հարմարեցման չափերի կարգավորման համար: Բաճկոնի վզատեղը մշակված է կտրած կանգունակով օձիք: Օձիքի լայնությունը միջնամասում 13սմ, ներսի | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կողմից մշակված դեղնականաչավուն գույնի ֆլիս տեսակի կտորով, որի միացման կարում մշակված է կախիչ: Օձիքի հետադարձ երեսին մշակվում է եզրեր 6սմx2.5սմ կպչուն ժապավենով փակվող տոպրակացու կտոր, որի մեջ տեղադրվում է գլխանոցը /կապիշոն/: Գլխանոցը կարվում է երեսացու կտորից մեջը աստառ, որը բաղկացած է 3 կտորից, դիմային մասի երկու կտորները երկարացված են յուրաքանչյուր կողմից 16սմ, որոնց յուրաքանչյուրի վրա կարված է 2 զուգահեռ կպչուն ժապավեններ 8սմx2.5սմ ձևաչափի, նախատեսված դեմքի ծնոտային հատվածը ցրտից և քամուց պաշտպանելու համար, դիմային մասով անցնում է գաղտնի 3մմ կլոր էլաստիկ ժապավեն, երկու կողմից պլաստմասե կարգավորիչներով: Գլխանոցի հետևամասը վրադիր կտորով է, որի միջով անցնում է 3մմ կլոր էլաստիկ ժապավեն /ռեզին/ պլաստմասե կարգավորիչով և 10սմx3.5սմ ձևաչափի կարգավորիչ լեզվակով, որը ամրանում է գլխանոցին ինքնակպչուն ժապավենով: Գլխանոցի վրա՝ օձիքի միացման կարից 1.5սմ վերև մշակվում է 3 հատ 6սմx2.5սմ կպչուն ժապավեն տոպրակացու կտորի կոճկման համար: Լանջափեշի ձախ կողմում շղթային զուգահեռ մշակված է գաղտնի ծոցագրպան ատրճանակի համար, որը կոճկվում է 16սմ երկարությամբ շղթայով: Գրպանի ներսից ամրացվում է քուղ՝ մետաղական բռնակով: Բաճկոնի աստառի ձախ կրծքամասում մշակված է ծոցագրպան՝ շերտիկով, որը կոճկվում է ինքնակպչուն ժապավենով: Ուսերի վրա տեղադրված են ուսադիրներ ախլակների վրա նույն գործվածքից, ախլակները կոճկվում են մեկ դեղնականաչավուն գույնի կոճակ օղակով: **Տաբատը**՝ մշակված է գոտիով՝ զարդակարված շեղանկյուն ձևով: Առաջամասը կողքի թեք կտրված գրպաններով: Գրպանի վերնամասը (բերանը) մշակված է 0.6 սմ լայնությամբ զարդակարով: Գոտու վրա տեղադրված են 6 կամրջակներ, յուրաքանչյուրը 75սմx1.5սմ ձևաչափի: Առաջամասում մշակված են ծնկակալեր: Տաբատը կոճկվում է գաղտնի կոճկվածքով, շղթայով և 2 հատ 18 մմ տրամագծով օղակ կոճակով, գոտու վրա: Տաբատի ներդիրը մշակվում է 200 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով, որը մգդակարված է անջրաթափանց գործվածքից աստառի հետ՝ | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ներքին եզրից 15 սմ բարձրության վրա: Հետնամասում գոտին լայնացրած է և ամբողջությամբ զարդակարված: Առաջամասում կողքերից կափույրով երկձալ վրադիր գրպաններ, լայնությունը ներքևում՝ 20սմ, վերևում՝ 22սմ, երկարությունը 25սմ, կափույրի լայնությունը 7սմ: Կափույրները կոճկվում են գաղտնի կոճկվածքով՝ 2 հատ ինքնակպչուն ժապավենով: Վրադիր գրպանների եզրերը, ծնկակալները զարդարված են զույգ ասեղ զարդակարով: Տաբատի փողքային մասի ծալվածքի միջով անց է կացվում կտորից քուղեր, որոնց ծայրերը դուրս են գալիս ծալվածքի վրայի անցքերից: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: **Ձմեռային կեպին** բաղկացած է կոշտ հովարից, միջնամասից, կողամասերից, հատակից և ականջակալներով ծոծրակամասից: Երեսացուն՝ նույն կոստյումի գունաքողարկված գործվածքից: Աջ ականջակալին կարվում է՝ 8 սմ երկարությամբ տիսմայե ժապավեն, որի վրա ամրացված են 2 հատ մետաղյա կոճգամի մտնող մասերը ականջակալի եզրակարից դեպի ներս՝ 1-ինը 2սմ, 2-րդը՝ 3-4սմ հեռավորության վրա, իսկ ձախ ականջակալի վրա եզրից դեպի ներս 2 սմ հեռավորության վրա ամրացվում է՝ 1 հատ մետաղյա կոճգամի ամրացվող մասը: Գլխարկահատակի կենտրոնում ներսից դրոշմվում է շեղանկյուն դրոշմ, որի վրա արտացոլվում է գլխարկի չափսը, տարեթիվը և արտադրող կազմակերպության անվանումը: Ականջակալներով ձմեռային կեպին կարվում է մոխրագույն արհեստական մորթուց, 890 գրամ 1մ2 մակերեսային խտությամբ, մորթախավի բարձրությունը՝8-10մմ: Ականջակալ-ծոծրակամասի մորթին մշակվում է եզրերից 5-7մմ հեռավորության վրա՝ զարդակարով: Ներսամասը 5-6 սմ կողմերով քառակուսաձև մգդակարվում է 142 արտիկուլի կամ համարժեք մոխրագույն կամ պաշտպանական գույնի բամբակյա կտորից (բիազ), ներսից տաքացնող ներդիրը մշակված է 100 գրամանոց սինտեպոնով: Հովարի ներսից ներկարվում է 2-3մմ հաստության պլաստմասայե միջադիր: Եզրից դեպի ներս 1սմ խորությամբ մշակվում է զարդակար: Գլխարկաբոլորքի բարձրությունը, սկսած 54 չափսի գլխարկից, պետք է լինի 8,8 սմ՝ հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2մմ: Ծոծրակամասի | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | բարձրությունը՝ սկսած 54 չափսի գլխարկից պետք է լինի 8,2 սմ՝ հաջորդաբար յուրաքանչյուր չափսին ավելանում է 2մմ:Ականջակալների եզրերը ամրացվում են գլխարկահատակին կիպ: Կեպիների հովհարը արտադրվում է կլորավուն և մեջտեղի մասում 5,5 սմ լայնությամբ: Գլխարկաբոլորքի առջևի կենտրոնական մասի մեջտեղում ամրացվում է ալյումինե համաձուլվածքից, օվալաձև դեղնականաչավուն գույնի գլխարկանշան՝ 32 ճառագայթով: Կենտրոնական մասը ՀՀ դրոշի շերտագծերից՝ վրայից հնգաթև աստղ: Բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումները՝ 2%: Արտաքին տեսքը համաձայն հաստատված նմուշի: **Փաթեթավորումը**՝ գործարանային արկղերով, մեկ արկղի մեջ՝ երեք շարք, յուրաքանչյուր շարքում 18 հատ առանձին-առանձին՝ ընդամենը 54 հատ: Արկղերում գլխարկները պետք է լինեն չդեֆորմացված: Ժապավեն <<ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ>> պատրաստվում է թվային պատկերով, գունաքողարկող կտորի վրա, ներսի կողմից ծգվող ջրակայուն շերտով, ուղղանկյունաձև, որի վրա ձախից աջ կանաչ գույնի թելով, մեծատառերով պետք է գրված լինի <<ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ>>: Տառի բարձրությունը՝ 10մմ, լայնությունը՝ 6սմ, իսկ պատի հաստությունը 2մմ: Ժապավենի պատրաստի չափսերը 12.8սմx2.8սմ: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Ժապավեն <<ԱՐՅԱՆ ԿԱՐԳԻ>> պատրաստվում է թվային պատկերով, գունաքողարկող կտորի վրա, ներսի կողմից ծգվող ջրակայուն շերտով, ուղղանկյունաձև, որի վրա ձախից աջ կանաչ գույնի թելով, մեծատառերով պետք է գրված լինի <<ԱՐՅԱՆ ԿԱՐԳԻ>> նշումները, համաձայն պատվիրատուի կողմից տրամադրված սանդղակի: Տառի բարձրությունը՝ 15մմ, լայնությունը՝ 13սմ, իսկ պատի հաստությունը 2.8մմ: Ժապավենի պատրաստի չափսերը 12.8սմx2.8սմ, տակի շերտին տեղադրվում է ինքնակպչուն ժապավեն /լիպուչկա/: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Թևքանշան <<ՀՀ ԱԱԾ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ>> պատրաստվում է թվային պատկերով, գունաքողարկող կտորի վրա, ներսի կողմից ծգվող ջրակայուն շերտով, սահմանված ձևի, որի վրա կանաչ գույնի թելով, մեծատառերով պետք է | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ասեղնագործված լինի <<ՀՀ ԱԱԾ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ>> և ՀՀ ԱԱԾ խորհրդանշանը: Թևքանշանի պատրաստի չափսերը 8.3սմx8.3սմ: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Արտադրվում են 44/2 մինչև 64/6 չափս-հասակի: Բաճկոնի և տաբատի ներսամասում փակցվում է համազգեստի խնամքի վերաբերյալ պիտակ, որի վրա պետք է նշված լինի. արտադրող կազմակերպության անվանումը, չափս-հասակը, կտորի բաղադրությունը և խնամքի վերաբերյալ տեղեկություն /լվածքի 300C ջրի ջերմաստիճանի, արդուկման և քիմմաքրման/: Բաճկոնի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: **Փաթեթավորումը**՝ հակերով, հակերի մեջ 2 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 լրակազմ: Հակերի չափսերը պետք է համապատասխանեն համազգեստի չափսերին, որպեսզի համազգեստը չճմրթվի: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: | | | | | | | | | |
| 6 | 35811160/520 | մարտական հանդերձանք | "Քանաքեռի կարի ֆաբրիկա" ՍՊԸ | **Ամառային կոստյում կեպիով /բաճկոն և տաբատ/ բամբակյա կոմուֆլյաժ գործվածքից /սահմանապահ զորքերի/**: Ամառային կոստյում կեպիով, զինվորական, բամբակյա, գունաքողարկման թելի C 8861 արտիկուլի կամ համարժեք գործվածքից, 1մ2 մակերային խտությունը՝ 235գր, բաղադրությունը՝ 35% բամբակ, 65% պոլիէսթեր, ամրապնդված ջրայուղաանդրադարցնող ծածկույթով, փափկեցված: Կոստյումը բաղկացած է բաճկոնից, տաբատից և կեպիից: **Բաճկոնը** միալանջ, կոճկվում է կենտրոնական կոճկվածքով 6 օղակ կոճակներով, որից վերևից առաջին կոճակը կոճկվում է բաց կոճկվածքով, իսկ 5 օղակ կոճակները գաղտնի կենտրոնական կոճկվածքով: Բաճկոնի առաջամասը ուղիղ ձևացքով, փեշամասերը տաբատի մեջ դնովի: Բաճկոնն ունի ծալովի օձիք, որի միացման կարում մշակված է կախիչ: Բաճկոնի առաջամասի կրծքամասում | լրակազմ | 12894,00 | 29011500 | 2250 | ք. Երևան, Այվազովսկու նրբ. 5 | 2250 | 0 | 1450 | 800 | 0 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | մշակված են վրադիր երկու, մի կողմից կիսաձավալուն բացվածքով գրպաններ կափույրներով: Կրծքամասի գրպանի լայնությունը 14.5սմ, երկարությունը 15.5սմ, կափույրը 6սմ, որը կոճկվում են գաղտնի կոճկվածքով՝ երկու կոճակ օղակով: Կրծքամասի աջ գրպանի վերևը ամրացվում է <<ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ>> ժապավեն, իսկ ձախ գրպանի վերևը ամրացվում է 12.8x2.8սմ ձևաչափի կպչուն ժապավեն <<ԱՐՅԱՆ ԿԱՐԳԻ>> համար: Բաճկոնի հետևամասը բաղկացած է կոկետկայից և հետևամասից, որի երկու կողմերում մշակվում է 2.5սմ չափով կողային ծալքեր: Գոտկատեղում ներսից 3 սմ լայնքով մշակվում է կտոր գաղտնի գոտու համար, որի միջով անցկացվում է կարգավորվող էլաստիկ ժապավեն ռեզին, որը կոճկվում է 2 հատ պլաստմասե կոճակով: Ձախ թևքի վրադիր գրպանի կենտրոնում կարվում է <<ՀՀ ԱԱԾ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ>> թևքանշանը: Թևքերին տեղադրվում են կափույրով վրադիր գրպաններ լայնությունը 14սմ, երկարությունը 15սմ, կափույրը 6սմ, որոնք կոճկվում են 2 հատ կպչուն ժապավենով, գաղտնի կոճկվածքով: Թևքերը ներկարված են ամբողջովին փակ զույգ կարերով: Արմունկի մասում մշակվում են լրացուցիչ կրկնակի զարդակարերով ուղղանկյունաձև /անկյունները շեղ կտրվածքով/ արմնկակալներ: Կողքերի, թևքերի և ուսերի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով: Թևքերի ներքևի մասում մշակված են պատաններ, որոնք բազկակալում կոճկվում են 2 կոճակ օղակով: Ուսերի վրա տեղադրված են ուսադիրներ ախլակների վրա նույն գործվածքից, ախլակները կոճկվում են մեկ կոճակ օղակով: Աստառը բամբակյա /բիազ/ գործվածքից, թիկունքի և կրծքավանդակի հատվածում: Աստառի ձախ կրծքամասում մշակված է վրադիր ծոցագրպան, որը կոճկվում է կպչուն ժապավենով: **Տաբատը** ուղիղ ձևվածքով է, ազատորդ փողքերով կազմված է առաջամասից, հետնամասից և գոտուց: Առաջամասը՝ կողային թեք ներկարված գրպաններով, 2 հատ վրադիր եռածալ, մի կողմից կիսաձավալուն գրպաններով և ծնկակալներով: Նստատեղը մշակված է օվալաձև կրկնակի գործվածքից՝ զարդակարված 0.7սմ լանությամբ կրկնակի կարով: Գուլֆիկը գաղտնի կոճկվածքով, կոճկվում է 4 հատ կոճակ օղակով, | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | որից մեկը՝ գոտու վրա: Գոտին 5սմ լայնությամբ, որի վրա մշակված է 6 կամրջակով և գոտու չափը կարգավորող ներկարված 2 ախլակներով: Ախլակները կոճկվում են 1 օղակով և 2 կոճակով: Տաբատի առաջամասում ծնկից վերև մշակվում են կափույրով փակվող եռածալ վրադիր, մի կողմից կիսածավալուն գրպաններ, լայնությունը ներքևի հատվածում 21սմ, վերևի հատվածում 23սմ, երկարությունը 22սմ, կափույրը 7սմ, կափույրները կոճկվում են քաղտնի կոճկվածքով, 1 կոճակ օղակով: Տաբատի առաջամասում մշակվում են քառանկյուն ծնկակալներ: Տաբատի փոխքերի ծալքի մեջ մշակվում է պարան /տիսմա/, որոնց ծայրերը դուրս են գալիս ծալվածքի վրայի անցքերից: Տաբատի փողքերը ծալված միակար կարված: Ներսի, դրսի և հետնամասի միացման կարերը կարվում են փակ զույգ կարերով: Բաճկոնի և տաբատի միացման բոլոր կարերը կարվում են շղթայական փակ զույգ կարերով: Համազգեստի կոճակները՝ 12-15մմ տրամագծի, պատրաստված ջերմակայուն (չհալվող) նյութից, չորս կարանցքերով, եզրերը թեք անկյան տակ երկկողմանի հղկված, երկողմանի կարվող, գույնը՝ պաշտպանական: **Կեպին** աստառով է, կազմված է կոշտ հովհարից, միջնամասից, կողամասերից և հատակից: Կողամասերը /միջնամասը և հատակը/ մշակվում են սոսնձային կտորից միջադիրով և դեղնականաչավուն գույնի աստառով, բամբակյա /բիազ/ կտորից: Հետնամասում, կեպիի չափը փոփոխելու համար մշակված է պաշտպանական գույնի պլաստմասե կարգավորիչ: Հովհարը միանում է գլխարկին կտորի կողեզրերով: Հովհարին միջադրված է պլաստմասե միջադիր: Ճակատային մասին տեղադրված է 4 սմ լայնությամբ երկտակ կտորից կարված գոտի, միջադիրով: Հատակին տպագրական ներկով դրոշմվում է կեպիի չափսը: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Ժապավենե <<ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ>> պատրաստվում է թվային պատկերով, գունաքողարկող կտորի վրա, ներսի կողմից ծգվող ջրակայուն շերտով, ուղղանկյունաձև, որի վրա ձախից աջ կանաչ գույնի թելով, մեծատառերով պետք է գրված լինի <<ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ>>: Տառի բարձրությունը՝ 10մմ, լայնությունը՝ 6սմ, իսկ պատի հաստությունը 2մմ: Ժապավենի | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | պատրաստի չափերը 12.8սմx2.8սմ: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Ժապավեն <<ԱՐՅԱՆ ԿԱՐԳԻ>> պատրաստվում է թվային պատկերով, գունաքողարկող կտորի վրա, ներսի կողմից ծգվող ջրակայուն շերտով, ուղղանկյունաձև, որի վրա ձախից աջ կանաչ գույնի թելով, մեծատառերով պետք է գրված լինի <<ԱՐՅԱՆ ԿԱՐԳԻ>> նշումները, համաձայն պատվիրատուի կողմից տրամադրված սանդղակի: Տառի բարձրությունը՝ 15մմ, լայնությունը՝ 13սմ, իսկ պատի հաստությունը 2.8մմ: Ժապավենի պատրաստի չափերը 12.8սմx2.8սմ, տակի շերտին տեղադրվում է ինքնակպչուն ժապավեն /լիպուչկա/: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի: Թևքանշան <<ՀՀ ԱԱԾ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ>> պատրաստվում է թվային պատկերով, գունաքողարկող կտորի վրա, ներսի կողմից ծգվող ջրակայուն շերտով, սահմանված ձևի, որի վրա կանաչ գույնի թելով, մեծատառերով պետք է ասեղնագործված լինի <<ՀՀ ԱԱԾ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ>> և ՀՀ ԱԱԾ խորհրդանշանը: Թևքանշանի պատրաստի չափերը 8.3սմx8.3սմ: Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի:<br>Արտադրվում են 44/2 մինչև 64/6 չափս-հասակի: Բաճկոնի և տաբատի ներսամասում փակցվում է համազգեստի խնամքի վերաբերյալ պիտակ, որի վրա պետք է նշված լինի. արտադրող կազմակերպության անվանումը, չափս-հասակը, կտորի բաղադրությունը և խնամքի վերաբերյալ տեղեկություն /լվածքի 300C ջրի ջերմաստիճանի, արդուկման և քիմմաքրման/: Բաճկոնի ձախակողմյան փեշին, ներքևի եզրից 3 սմ բարձրության վրա, ներսի կողմից պետք է լինի տպագրական ներկով դրոշմ: Դրոշմի վրա նշված՝ տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բաճկոնի վերևից երկրորդ կոճակի վրա պետք է կախված լինի պիտակ, պիտակի վրա պետք նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: **Փաթեթավորումը**՝ հակերով, հակերի մեջ 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 1 լրակազմ: | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Հակերի չափսերը պետք է համապատասխանեն համազգեստի չափսերին, որպեսզի համազգեստը չճմրթվի: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: | | | | | | | | | | |

**Արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի տես՝ ՀՀ վարչապետի 2018թ. սեպտեմբերի 17-ի «Ազգային անվտանգության մարմինների զինծառայողների միասնական համազգեստը և տարբերանշանները հաստատելու մասին» N 1217-Լ որոշումը:

*** **Կրման ժամկետը** տես՝ ՀՀ Կառավարության 2015թ. դեկտեմբերի 3-ի N1457-Ն որոշման հավելված N2 համաձայն:

**** Հանդերձանքի յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար, անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:

**Ծանոթություն՝** 1. Նախքան մատակարարումը սկսելը հանդերձանքի նմուշները համաձայնեցվում են Գնորդի հետ, որից հետո Գնորդը Վաճառողին տրամադրում է հանդերձանքի քանակները՝ ըստ չափսերի և հասակների:

*2. Մատակարարվող ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ, ապրանքի տեղափոխումը ավտոտրանսպորտով, բեռնաթափումը՝ բանվորական ուժով կատարվում է մատակարարի կողմից:*

*3. Ապրանքը ընդունում է պահեստապետը:*

Տեխնիկական բնութագրերով բոլոր հղումների դեպքում Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի, 5-րդ մասի համաձայն հասկանալ կամ համարժեքը:

**ԳՆՈՐԴ**

**ՀՀ ԱԱԾ**
**ք.Երևան, Նալբանդյան104**
**ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի**
**գործառնական վարչություն**
**Հ/հ 900011301067**
**ՀՎՀՀ 01507079**
**Տնօրենի տեղակալ**
**Ա. Հակոբյան**

**ՎԱՃԱՌՈՂ**

**«ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ**
**ք. Երևան, Զ. Սարկավագի 157**
**"Արարատբանկ" ԲԲԸ**
**Հ/հ 1510023294810100**
**ՀՎՀՀ 00803554**
**Տնօրեն**
**Ա. Ազատյան**

Հավելված N 2
« 11 » 03 2020թ. կնքված
ծածկագրով պայմանագրի
N 11/218-2020

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 4 | 35811160/518 | մարտական հանդերձանք | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 11037240 | 11037240 | 11037240 | 11037240 | 11037240 | 11037240 | 11037240 |
| 6 | 35811160/520 | մարտական հանդերձանք | 0 | 0 | 0 | 18696300 | 18696300 | 18696300 | 29011500 | 29011500 | 29011500 | 29011500 | 29011500 | 29011500 | 29011500 |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301067
ՀՎՀՀ 01507079
Տնօրենի տեղակալ
Ա. Հակոբյան

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՔԱՆԱՔԵՌԻ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ
ք. Երևան, Զ. Սարկավագի 157
"Արարատբանկ" ԲԲԸ
Հ/հ 1510023294810100
ՀՎՀՀ 00803554
Տնօրեն
Ա. Ազատյան

Հավելված N 3
«      »          20  թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

______________________________
______________________________
գտնվելու վայրը _______________
հh _________________________
հվհh _______________________

Պատվիրատու

______________________________
______________________________
գտնվելու վայրը _______________
հh_________________________
հվհh_______________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

«      » «            » 20    թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «      »      «                      »  20      թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«      »          20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ  N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ______________
Գնորդի անվանումը / Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20   թ. ______________ -ին կնքված N ______________
պայմանագրի կնքման ամսաթիվը / պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ______________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________
ազգանուն, անուն

______________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________
ազգանուն, անուն

______________
ստորագրություն